ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՌԻՆՁ
ԳՅՈՒՂԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ՀՏԴ 719:908
ԳՄԴ 85.11+28.89
Կ 294

Հեղինակ **Սամվել Կարապետյան**
Գիտական խմբագիր **Էմմա Աբրահամյան**
Խմբագիր-սրբագրիչ **Հասմիկ Հովհաննիսյան**
Համակարգչային ձևավորող **Արմեն Գևորգյան**
Չափագրությունների հեղինակ **Աշոտ Հակոբյան**

Կարապետյան Սամվել
Կ 294 **Առինջ գյուղի պատմական հուշարձանները.** / Ս. Կարապետյան.- Եր.: ՀԵՈՒ հիմնադրամ, 2015 - 44 էջ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում սույն գրքույկի հովանավոր հարգարժան Վարդան Հարությունյանին

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ աղբյուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խութերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաչությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաչափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նույն հասարակության յուրաքանչյուր մասնիկը լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարազատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաչության խորացման գործի մեջ:

Կեցցե՛ն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փա՛ռք սրբազան Հայրենիքին:

ՀՏԴ 719:908
ԳՄԴ 85.11+28.89

ISBN 978-9939-843-27-8

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2015
© Կարապետյան Սամվել, 2015

ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 6,5 կմ հարավ-արևմուտք՝ գրեթե կից քաղաքամայր Երևանի հյուսիսարևելյան արվարձաններին՝ ծովի մակերևույթից 1290-1350 մ բարձրությամբ հարավահայաց մեղմաթեք բլրալանջին և նրա առջև փռված լայնագոգ հարթության վրա:

Պատմություն. գյուղի տարածքից հայտնաբերված վաղբրոնզեդարյան հնագիտական գտածոները փաստում են, որ բնակավայրը գոյություն է ունեցել դեռևս մ.թ.ա. Գ հազարամյակում: Խոր հնության դրոշմն են կրում նաև գյուղեզրի բերդի պարսպապատերի՝ հազիվ նշմարվող հիմքերը, որոնք վերագրվում են Վանի թագավորության շրջանին:

Առինջը[1] հարուստ է նաև վաղմիջնադարյան հուշարձաններով: Չնայած այս ամենին՝ գյուղանվան վաղագույն հիշատակություններից մեկը մեզ

1 Նույնանուն գյուղեր պատմական Հայաստանի տարածքում եղել են նաև Մոկս, Մուշ, Շահապոնք, Վայոց ձոր և Քղի գավառներում:

Առինջ գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2014 թ.) արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստեց Ա. Հակոբյանը, 2014 թ.)

Առինջ գյուղը տիեզերքից Google Earth, 2014 թ.

է հասել միայն 1206 թ.-ից (Կեչառիս վանքի գավթի ներսում՝ հյուսիսային որմին պահպանված նվիրատվական քառատող արձանագրության մեջ)[2], այնուամենայնիվ, գյուղում և գյուղամերձ հնավայրերում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ այն բնակելի է եղել առնվազն Վանի թագավորության ժամանակաշրջանից, ընդ որում, ի դեմս գյուղի հյուսիսային եզրին պահպանված բերդի՝ վայրն ունեցել է նաև ռազմավարական կարևոր նշանակություն:

Զուտ հայաբնակ Առինջը դարեր շարունակ նաև աչքի է ընկել բազմամարդությամբ: Առանձնապես ուշագրավ է, որ այն շարունակել է հայաբնակ մնալ նաև 1605 թ. գրեթե ողջ Արևելյան Հայաստանը հայ բնակչությունից պարպած Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթից հետո:

ԺԵ-ԺԷ դարերում գյուղը կառավարում էին տեղի ազդեցիկ հայերը, որոնց ԺԵ-ԺԶ դարերում տրվում էր *պարոն* պատվանունը:

ԺԷ դարի սկզբին Առինջը հիշվում է թուրք-պարսկական պատերազմների կապակցությամբ, քանի որ ճակատամարտերից մեկը տեղի էր ունեցել գյուղի մոտ. «Եւ զկնի սորա այլ ոմն Ջալալի փաշայ՝ զոր Թօփալ Օսման փաշայ ասէին, որ է Զիալ փաշայի որդին՝ սա եկեալ մարտեաւ ընդ Քանաքրլու Մահ-

2 **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 314:

մատին ի գաւառին Կոտէից, որ այժմ ասի Ղրխբուլաղ՝ մերձ ի գիւղն Առինճ. եւ փախոյց զՔանաքրլու Մահմատն»[3]:

Ի տարբերություն հարևան շատ այլ բնակավայրերի՝ Առինջը զուտ հայաբնակ է մնում մինչև խանական տիրապետության վերջը և նմանատիպ կացությունը պահպանում նաև ռուսական տիրապետության ժամանակաշրջանում:

Բնակչություն. գրավոր հիշատակությունների և հատկապես պահպանված նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ բնակավայրն առավել ծաղկուն և մարդաշատ է եղել հատկապես ԺԲ-ԺԳ, ապա ԺԵ-ԺԷ դարերում և ի վերջո նաև մեր օրերում:

Ինչ վերաբերում է վիճակագրական տվյալներին, ապա այդպիսիք գյուղի մասին ի հայտ են գալիս երկրամասը ռուսական կայսրությանը միավորելուց հետո և հասնում մինչև մեր օրերը: Տարբեր տարիներին իրականացված մարդահամարների արդյունքների համադրումը բացահայտում է, որ մինչև ԺԹ դարի կեսերը գյուղի բնակչությունը շարունակաբար նվազել է և միայն դրանից հետո աստիճանաբար աճել.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1831[4]	43	126	117	243
1839[5]	30	92	62	154
1842[6]	30	85		
1859[7]	38	159	134	293
1869[8]	45			
1873[9]	62	225	213	438
1886[10]	71			
1894[11]	70			
1897[12]				538
1908[13]				651
1909[14]		400	369	769
1914[15]				883
1926[16]				815
1931[17]	218	467	502	969
1937[18]		572	563	1135
1939[19]				1500
1959[20]				1612
1970[21]				2981
1979[22]				3856
1989[23]				4831
2001[24]		2664	2749	5413
2004[25]				5670
2011[26]		3046	3174	6220

Տնտեսություն. մատենագրական և վիմագրական աղբյուրներից հայտնի է, որ դարեր շարունակ Առինջ գյուղն աչքի է ընկել բազմաթիվ ձիթհաններով, ջրաղացներով և հատկապես մրգատու այգիներով[27]:

Ի հակադրություն բնակչության հարաբերական մեծաթվության՝ հարևան գյուղերի համեմատ Առինջն ավելի սակավահող էր: Խնդիրն առավել սրվում էր, քանի որ եղած հողերի մի նշանակալի մասն էլ վանքապատկան լինելու պատճառով չէր տրվում գյուղացիներին: Հայտնի է, որ հողային հարցը սուր բնույթ էր ստացել 1883 թ. «...վերջին ժամանակ անդադար կռիւներ ու անբաւականութիւններ ունի գիւղին հարևան վանքապատկան Գետարգել անուանված հողերի կապալառուի հետ: Առինջ գիւղի բնակիչները աշխատում են վանքապատկան հողերին տիրել»[28]:

Եկեղեցի. գտնվում է գյուղի հին մասի կենտրոնում (N 40°13′52.57″; E 044°34′20.62″)՝ ծովի մակերևույթից 1305 մ բարձրության վրա:

Կասկածից վեր է, որ առնվազն միջնադարից Առինջն ունեցել է իր եկեղեցին: Գրավոր աղբյուրները, սակայն, այդ մասին լռում են մինչև 1839 թ., երբ առաջին անգամ գյուղում Սբ. Աստվածածին անվամբ ծխական եկեղեցի է հիշվում. «...եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի»[29]: Նույն անվամբ եկեղեցին հիշվում է նաև 1842 թ.[30]:

Սբ. Հովհաննես եկեղեցին 1970-ական թթ. վերջերին (լուս.՝ Ա. Օհանյանի)

Ինչպես երևում է, շուրջ երեք տասնամյակ անց եկեղեցու շենքն արդեն հասցրել էր այն աստիճան քայքայվել, որ 1879 թ. առինջեցիները որոշում են

3 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 103:

4 ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 44-50; գ. 319, թ. 34-39: Ի դեպ, նրանցից բնիկ էր 33 տունը՝ 192 շունչ (100 ար. և 92 իգ.), ուրմեցիներ էին 6 տուն՝ 31 շունչ (17 ար. և 16 իգ.), խոյեցիներ՝ 3 տուն՝ 14 շունչ (7 ար. և 7 իգ.) և մանազկերտցի 1 տուն՝ 4 շունչ (2 ար. և 2 իգ.):

5 ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 10, թ. 5: Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յ.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 160:

6 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, թ. 1բ (վկայված է միայն արական բնակչությունը՝ 85 շունչ):

7 ՀԱԴ, ֆ. 267, ց. 1, գ. 13, թ. 37-48:

8 ՀԱԱ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 42, թ. 3:

9 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 177, թ. 288:

10 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3:

11 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 9013, թ. 1:

12 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 25:

13 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 186.

14 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 2 շրջ.: Նաև՝ ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 283:

15 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, отдел статистический, с. 90.

16 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, նույն տեղում:

17 ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակությունը, Երևան, 1936, էջ 38:

18 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, թ. 6:

19 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, նույն տեղում:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում: Տե՛ս նաև ՀՍՀ, հ. 1, Երևան, 1974, էջ 235:

22 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, նույն տեղում:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում:

26 Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի արդյունքները, Երևան, 2013, էջ 9:

27 **Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն**, հ. երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 20-21:

28 «Մշակ», 1883, № 176, էջ 2:

29 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., նույն տեղում:

30 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 617, թ. 32:

Առինջ գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցին հյուսիս-արևմուտքից և 1880 թ. իրականացված հիմնովին վերակառուցման մասին պատմող արձանագրությունն արևմտյան ճակատից բացված մուտքի բարավորին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

հնի տեղում բոլորովին նոր եկեղեցի կառուցել (վկայված է Սբ. Հովհաննես անվամբ, որը, անշուշտ, մինչ նշյալ թվականն իրականացված նորոգությանը կամ վերակառուցմանը հաջորդած վերաօծման արդյունք էր):

Ծրագիրը կյանքի կոչելու համար ձևավորվում է հոգաբարձություն, որի անդամները՝ Բաղդասար Հարությունյանը, Պապի Սահակյանը, Հակոբ Փիլիպոսյանը, Ղուկաս Այդինյանը և Թադեոս Գևորգյանը, 1879 թ. սեպտեմբերի 22-ին նոր եկեղեցի կառուցելու համար պայմանագիր են կնքում երևանաբնակ վարպետ Մելքոն Դավթյանի հետ[31]:

Վարպետը, ի դեպ, պարտավորվում է հնի հիմքերի վրա կառուցել Քանաքեռի Սբ. Հակոբ եկեղեցու նման սրբատաշ քարից մի նոր եկեղեցի՝ սկսած պայմանագիրը կնքելու օրից մինչև 1880 թ. հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում[32]:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին եկեղեցու կառուցման խնդրով գյուղի հասարակությունը դիմում է Երևանի վիճակային կոնսիստորիային. «...սուրբ Յովհաննէս եկեղեցին գեղջ մերոյ գոլով փայտաշէն և կարի յոյժ անշուք խանգարեալ դրութեան, ցանկամք նորոգել և հաստատել ի վերայ նախկին հոյակապ հիմանն սրբատաշ քարամբք և շքեղ երկաթակապ լուսամուտօք...: Ուստի առ այն այժմ ունիմք եկեղեցական գումար աւելի քան զերիս հազար ռուբլիս...: Ի սկսանել մեր շինութեան յոյս ունեմք ամբողջութեամբ հաւաքել...: Յարակցեմք և զայս, թէ ի պակասել ծախուցն խոստանամք ի հասարակութենէս հոգալ զպակասորդն այնր շինութեան: Վասն որոյ խնդրեմ վաղափոյթ տնօրէնութիւն Ատենիդ, մինչդեռ կարելին համարի դիւրագին վարձել զվարպետս առ ի պատրաստութիւն յառաջիկայ գարնանս սկսանելոյ զշինութիւնն»[33]: Թույլտվությունը տրվում է 1880 թ. մայիսի 9-ին[34]:

Երևում է, որ վարպետը կատարել է խոսքը, քանի որ արևմտյան ճակատից բացված մուտքի բարավորի շինարարական եռատող արձանագրությունն էլ ավանդում է, որ կառույցը վեր է հառնել հենց 1880 թ.

Սոյն տաճար շինեցաւ | արդեամբ գիւղի հասարակութեան | ամի տեառն 1880 թիւն, | գրեց Մարտիրոս Տէր-Աբրահամեան:

Այնուհետև եկեղեցին միևնույն՝ Սբ. Հովհաննես անվամբ հիշվում է հետագա տարիներին (օրինակ՝ 1909 թ.)[35]:

31 ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 218, թ. 8:

32 Նույն տեղում: Պայմանագիրն ամբողջությամբ տե՛ս թ. 8-9 շրջ.:

33 ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 218, թ. 4: Խնդրո առնչությամբ տե՛ս թ. 6, 7, 10:

34 ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 218, թ. 5:

35 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 2 շրջ.:

Խորհրդային տարիներին եկեղեցու շենքը գործածվում էր որպես պահեստ:

2006 թ. արդեն բավականաչափ քայքայված կառույցը վերանորոգվում է պոլսահայ բարերար Մկրտիչ Սերթշիմշեքի, Պետրոս Շիրինօղլու, Կ.Պոլսի Բերայի Սբ. Երրորդություն եկեղեցու թաղային խորհրդի նախագահ Աբիգ Հայրապետյանի, Առինջի գյուղապետ Գ. Սարգսյանի, առինջեցի գործարար Գ. Ջանվելյանի և այլոց օժանդակությամբ:

Վերաբացման առիթով օծումը կատարվում է 2007 թ. հուլիսի 7-ին:

Համակ սրբատաշ տուֆ քարով կառուցված եկեղեցին (արտաքին չափերն են՝ 21,59 x 15,04 մ) ունի եռանավ բազիլիկ հորինվածք, արևելքում՝ կիսաշրջանաձև եզրագծով խորանի երկու կողմերում՝ քառանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Երկթեք ծածկի տակ առնված թաղերը հենված են խաչաձև կտրվածքով երկու զույգ սյուների և թվով ութ որմնասյուների վրա: Մուտքերը երեքն են՝ բացված արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներից:



Առինջ գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Քահանա. Առինջում քահանայագործած հոգևորականների մասին հայտնի տվյալները սկիզբ են առնում ԺԲ դարից և հասնում մինչև 1931 թ.: Ահա նրանց ոչ լրիվ ցանկը.

Գրիգոր քահանա (վախճ. 1181 թ.).

Հայր և որդի Բարսեղ և Ստեփանոս քահանաներ (հիվում են 1219 թ.).

Ավետիս Տեր-Ավետիսյան (ծնվ. 1781 թ., քհն. ձեռն. 1819 թ. մարտի 20-ին)[36].

Հովակիմ Առաքելյան (քահանայագործել է 1860-1862 թթ.)[37].

Մարտիրոս Տեր-Աբրահամյան (հիշվում է 1880 թ.).

Արմենակ Բաղդասարյան Տեր-Մկրտչյան (ծնվ. 1865 թ., քհն. է առաջադրվել 1894 թ.[38], ձեռն.՝ 1896 թ. նոյ. 9-ին[39], անվանափոխվել է Հակոբ)[40].

Արսեն Տեր-Խաչատրյան (հիշվում է 1931 թ. մարտի 7-ին)[41]:

Դպրոց. 1873 թ. արդյո՞ք հենց այն տարեթիվն է, երբ Առինջում առաջին անգամ դպրոց է բացվել: Դիվանական վավերագրերում, համենայն դեպս, հաստատության գործունեության մասին առկա տվյալները սկիզբ են առնում միայն նշյալ թվականից: Ընդ որում, 1873/74 ուստարում դպրոցը բաղկացած էր 1 դասարանից, ուներ 1 ուսուցիչ և 20 աշակերտ[42]:

1874/75 ուստարում չէր գործում[43]:

Այն իրողությունը, որ կրթօջախը չի հիշվում ցարական իշխանությունների կարգադրությամբ 1885 թ. փակված հայոց դպրոցների ցանկում, ենթադրում է, որ մինչ այդ հրամանը դպրոցն արդեն իսկ փակված է եղել:

Կրթօջախի գործունեության մասին հաջորդ տեղեկությունները վերաբերում են այն շրջանին, երբ տասը տարվա արգելքից հետո՝ 1905 թ., կառավարությունը վերջապես հայերին արտոնում է սեփական միջոցների հաշվին ազգային դպրոցներ ունենալ: Օգտվելով նոր հնարավորություններից՝ առինջեցիները վերաբացում են երկար ժամանակ փակ մնացած ազգային դպրոցի դռները:

1908/09 ուստարում արդեն երկսեռ հաստատությունն առաջ է ընթանում 2 ուսուցչով և 78 աշակերտով (73 տղա, 5 աղջիկ)[44]:

1914/15 ուստարում երկու սենյակից բաղկացած սեփական շենքով եկեղեցական-ծխական երկսեռ երկամյա դպրոցը գործում էր հոգաբարձուներ Կարապետ Հարությունյանի, Նիկողոս Բարսեղյանի և Սահակ Թաղևոսյանի հոգածությամբ և ուներ մեկ ուսուցիչ (Զարուհի Գևորգյան Հովհաննիսյանց), 59 աշակերտ (49 տղա, 10 աղջիկ)[45]:

1915/16 ուստարում նույն ուսուցչուհու դասավանդմամբ ուներ 50 աշակերտ (40 տղա և 10 աղջիկ): Ուսումնական տարին սկսվել է նոյեմբերի 15-ից[46]: Տարվա ընթացքում դպրոցի գործունեությանը նյութապես սատարել է Երևանի թեմի դպրոցական հիմնադրամը[47]:

1916/17 ուստարում հոգաբարձուներ Ներսես Գրիգորյանի, Էյվազ Սարգիսյանի և Մեսրոպ Սահակյանի օժանդակությամբ գործում էր մեկ ուսուցչով (Ծերուն Տեր-Մկրտչյան) և 48 աշակերտով (37 տղա, 11 աղջիկ): Ուսումնական տարին սկսվել է 1917 թ. հունվարի 8-ից[48]: Հայտնի է, որ 1917 թ. դպրոցին նպաստ է տրամադրվել Գետարգել վանքի հասույթներից[49]: Նույն ուստարում դպրոցական գրադարանի գրքերի քանակը հասել էր 428 կտորի[50]:

36 ՀԱԴ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 25:
37 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4272, թ. 1:
38 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 9013, թ. 1: Խնդրո առնչությամբ տե՛ս նաև թ. 2-19:
39 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 9013, թ. 20:
40 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 3: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 336:
41 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 231:
42 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 37: Տե՛ս նաև գ. 38, թ. 13:
43 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 37, թ. 14:

44 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 320, թ. 2 շրջ.:
45 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 430:
46 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 453, թ. 40:
47 **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 78
48 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 453, թ. 36-37:
49 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 453, թ. 37 շրջ.:
50 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 453, թ. 36:

Կարմրավոր մատռուռն արևմուտքից և հարավ-արևմուտքից (վերին զույգ լուսանկարները՝ Արամ Օհանյանի, 1970-ական թթ. վերջ, իսկ ստորինները՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

1918 թ. դպրոցն ուներ 2 ուսուցիչ և 82 աշակերտ[51]:

Ի դեպ, 1916/17 ուստարում Առինջում Սահակ Աբրահամյանի և Մխիթար Զատիկյանի հոգաբարձության ներքո գործում էր նաև գաղթականական դպրոցը, որը տեղավորված էր տեղի եկեղեցական-ծխական դպրոցի շենքում՝ մեկ սենյակի մեջ: Ուներ մեկ ուսուցիչ՝ Մարտիրոս Երեցյան (ավարտել էր Մոկսի դպրոցը, վկայական ստացել Աղթամարի վանքից), 45 սան (25 տղա և 20 աղջիկ): Ուսումնական տարին սկսվել է նոյեմբերի 22-ից[52]:

Կարմրավոր մատուռ և գերեզմանոց. գտնվում են հին գյուղի սահմանագծում (N 40°14′00.22″; E 044°34′27.63″)՝ ծովի մակերևույթից 1324 մ բարձրության վրա:

Մատուռն ունի հատկապես ԺԳ դարում լայն տարածում գտած միանավ թաղածածկ փոքր չափերի (5,37 x 3,54 մ) բազիլիկ հորինվածք՝ արևելքում կիսաշրջան եզրագծով խորանով, արևմտյան ճակատից բացված միակ մուտքով և հակադիր ճակատներից



Կարմրավոր մատուռի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

(արևելյան և արևմտյան) դեպի ներս լայնացող զույգ լուսամուտներով:

Արդեն 1970-ական թթ. վերջերին բավականաչափ քայքայված մատուռը 2014 թ. ենթարկվում է ամբողջական վերականգնման[53]:

2014 թ. Կարմրավոր մատուռի տարածքում իրականացվում են հնագիտական ուսումնասիրություններ: Հեռացվում է դարերի ընթացքում կուտակված ավելորդ հողը, թափուր պատվանդանների մեջ են կանգնեցվում մի քանի խաչքարեր[54]:

Կարմրավոր մատուռի շուրջ տարածված գերեզմանոցում առկա խաչքարերից և տապանաքարերից մի քանիսն ունեն դեռևս ընթեռնելի կամ արդեն եղծված (կամ դրանց վերծանումը մեր փորձառությունից վեր եղած) արձանագրություններ: Ահա դրանք.

Տապանաքար. ուղղանկյունաձև, եռանիստ վերնամասով, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է հանգիստ պարոն Բիծին, որ տղա հասակ[աւ] | փոխեցաւ առ Ք(րիստո)ս եւ թողեալ ծնողաց իւր | տրտմութիւն, թվ(ա)կ(ա)ն ՋԷ (1458)՝ մահ տրա:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. ուղղանկյունաձև, եռանիստ վերնամասով, արձանագրությունը՝ 2 տող.

Այս է հանգիստ պարոն Խոթլուբակին՝ որդի պարոն Փիրուզին, | ...յին յիշէցէք ի Ք(րիստո)ս, թվ(ին) ՋԻ (1471):

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մասամբ եղծված 2 տող.

Այս է հանգիստ Ած[ապ]ովին, թվ(ին) ՋԽ (1491), | յիշեցէք ի Ք(րիստո)ս, ամէն:

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ թերավարտ 1 տող.

Այս է հ(ան)քիստ կարճայհասակ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. թերի տապանագիր է: Ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դդ.:

51 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ե, Երեւան, 1999, էջ 77:

52 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 453, թ. 38-39:

53 Ափսոսանքով ստիպված ենք արձանագրել, որ մատուռը ոչ թե վերականգնվել է, այլ վերակառուցվել: Մասնավորապես անհիմն կերպով որմերը բարձրացվել են երկու շարք քարով (դրանում կարելի է համոզվել 1970-ական թթ. վերջերին և 2014 թ. կատարված լուսանկարները միմյանց հետ համեմատելով), որով հուշարձանն իր համաչափություններով էապես տարբերվում է համանման կառույցներից (ձեռք է բերել դեպի վեր անսովոր և արհեստական ձգվածություն): Տանիքի լանջերի թեքությունն էլ, փոխանակ 90°-ի, ավելի սրանկյուն է: Եթե նախագծի հեղինակը չէր փորձել հին լուսանկարներ գտնել, ապա եզրահանգումները կարող էին հիմնվել հենց Առինջի գերեզմանոցի կամ էլ հարևան հնավայրերում ցարդ կանգուն մատուռների օրինակների վրա (Ակունքի Պողոս-Պետրոս վանքի և Կամարիսի գերեզմանատան մատուռներ):

54 Աշխատանքների այս բաժնում ևս, ցավոք, թույլ են տրվել որոշ սխալներ: Օրինակ՝ 1491 թ. վախճանված ոմն Ածապովի հիշատակին կերտված խաչքարը, փոխանակ կանգնեցնելու նույն հանգույցալի՝ բարեբախտաբար ցարդ նախնական տեղում պահպանված տապանաքարին կից, հեռացվել և կանգնեցվել է գերեզմանոցը երիզող նորաշեն շրջապարսպի վրա:

Խաչքար. գեղաքանդակ, քիվին և հիմնախաչի ստորին թևի երկու կողմերում՝ 2 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս է Ածապովին, թվ(ին) ՋԽ (1491):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ակնհայտ է, որ վերոնշյալ տապանաքարն ու սույն խաչքարը կերտված են եղել միևնույն հանգուցյալի հիշատակին և, ըստ այդմ, ի սկզբանե տեղադրվել են միմյանց կից (խաչքարը տապանաքարի արևելյան կողմում՝ երեսով դեպի արևմուտք), հանգամանք, որը հուշարձանախմբի վերականգնման ու բարեկարգման աշխատանքների ժամանակ, ցավոք, անտեսվել է:

Խաչքարի բեկոր. գեղաքանդակ, պահպանվել է վերին ձախ անկյունը, քիվին՝ փորագիր 1 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս է...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

Տապանաքար. ուղղանկյունաձև, 3 տողերից մեկը կենտրոնում՝ օղակաձև շրջանակի ներքո.

Սայ է ... ս(ուր)ք Նշանին, որ կ[ար]-/ճաւրեայ առ ա(ստուա)ծ փոխեցաւ...: / Այս է հանգիստ ...բէկուն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ դ.:

Խաչքար. գեղաքանդակ, քիվին (սկզբնամասը փշրված) և ստորին մասում՝ փորագիր 2 տող.

...արին(՞) յայգու / ...բբուտախին, պ(ա)ր(ո)ն Բուպին, պանդաւ (՞), թվին:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. ուղղանկյունաձև, միջնամասից ճաքած, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Ալատատին, որ կար-ճ/աւրեայ առ ա(ստուա)ծ փոխեցաւ եւ / դառն սու[գ ե]թող ընդանեաց, / թ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ դ.:

Խաչքար. գեղաքանդակ, քիվին՝ փորագիր 1 տող.

... բ(ա)էխա(ւ)ս Փ(ա)շ(ա)ճ(ա)ն(ի) իր կող(ա)կ(ի)ց...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

Չորս եղբայրների հիշատակին կերտված խաչքարը 1970-ական թթ. (լուս.՝ Ա. Օհանյանի) և 2014 թ.

Խաչքար. պատվանդանին կանգնած, երկու մասի կիսված, վերականգնված, գեղաքանդակ, քիվին (մեծ մասամբ եղծված) և քիվատակին՝ փորագիր 2 տող.

Ս(ուրբ)ք խաչս է հարազատ եղբարց՝ տ(է)ր Մանուէլին, Էսամբուղին, / Յակոբ վարդէպ(ե)տ(ի)ն, տ(է)ր Յոհանէսին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դդ.:

Խաչքար. պատվանդանին կանգնած, վերին մասը կոտրված, գեղաքանդակ, փորագիր արձանագրության պահպանված 2 տողերը՝ հորինվածքի միջին և ստորին մասերում.

... / ամուսին իմ՝ Խանաղին, / Թէզագուլին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

Խաչքար. պատվանդանին կանգնած, աջ եզրից ամբողջ բարձրությամբ փշրված, գեղաքանդակ, քիվին (վերջնամասը փշրված) և քիվատակին՝ փորագիր 3 տող.

Ս(ուրբ)ք խաչս բարէխաւս է ... / Յակոբ(ի)կ, / թվի(ն) ՌԾ (1601):

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. պատվանդանին կանգնած, կիսված և վերին ձախ հատվածից փշրված, գեղաքանդակ, քիվին (սկզբնամասը փշրված) և քիվատակին՝ փորագիր 3 տող.

...ին կ(ո)ղ(ա)կ(ի)ց... / թվ(ին) ՉՌ/Ի (1620):

Հրատ. առաջին անգամ:

Կարմրավոր մատուռն ու խաչքարերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքարի բեկոր. գեղաքանդակ, ագուցված մատուռի շուրջ կանգնեցված նորաշեն պարսպի մեջ: Արձանագրությունը՝ քիվին, ելնդագիր 1 տող.

Ս(ուր)ք խաչս պ(ա)ր(ո)ն Բաբին է եւ Ա...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԶ-ԺԷ դդ.:

Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային երեսին քառատող արձանագրության սկզբնամասը՝ փշրված.

... | ...ա Մկր... ...է տեղ... ...ան | հանդիպէք այսմ շիրմին, վ(ա)ս(ն) ա(ստուծ)յ տուք ողորմի, | ի ՌՄԽԱ (1792) թուին, ի մ...:

Հրատ. առաջին անգամ:

Գերեզմանոցի մատուռ. գտնվում է գյուղի հարավային կողմում տարածված գերեզմանոցի հին մասի հարավարևելյան կողմում (N 40°13′39.98″; E 044°34′18.88″)՝ ծովի մակերևույթից 1307 մ բարձրության վրա:

Մատուռը գրեթե կրկնում է Կարմրավորի հորինվածքը, սակայն չափերով փոքր-ինչ ավելի մեծ է (6,15 x 4,19 մ):



Մատուռի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Դեռևս 1980-ական թթ. կեսերին ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր պատմական հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության նախագծային գրասենյակի վերականգնող ճարտարապետները (նախագծի հեղինակներ՝ ճարտ.՝ Ս. Այվազյան և Ա. Բաղիշյան) կազմել էին կործանված, սակայն



Մատուռի արևմտյան և հարավային ճակատների վերականգնման էսքիզային նախագիծը (հեղ.՝ Ս. Այվազյան, 2014 թ.)

զանգվածեղ բեկորները տեղում պահպանված մատուռի վերականգնման էսքիզային նախագիծը: Կատարվել էին նաև հուշարձանի հողայինմաքրման աշխատանքներ:

Գերեզմանոցի՝ կործանված զանգվածեղ բեկորներով մատուռը հյուսիս-արևմուտքից և բարավորը (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 1980 թ.), մատուռը հողային աշխատանքներից հետո (լուս.՝ Ս. Այվազյանի, 1980-ական թթ. կեսեր)

Տեսարան գերեզմանոցի հին հատվածից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Ցավոք, 1990-ականներին ստեղծված տնտեսական պայմանները թույլ չէին տվել ժամանակին ձեռնարկել մատուռի վերականգնման գործը, իսկ անցնող տարիների բարձիթողի վիճակի հետևանքով հուշարձանն այն աստիճան է շրջափակվել նորագույն թաղումներով, որ ներկայումս մատուռի վերականգնումը մեծապես բարդացել է նաև աշխատանքների իրագործման համար տեխնիկա մոտեցնելու անհնարինության պատճառով:

Գերեզմանոց. գտնվում է Առինջ գյուղի հարավային կողմում և զբաղեցնում բավական ընդարձակ մակերես (400-250 մ)[55]: Պարունակում է շուրջ հարյուր կանգուն, մի քանի անգամ ավելի շատ տեղահան (հաճախ՝ բեկորված) խաչքարեր և մեծաթիվ տապանաքարեր:

Հակառակ հնավայրում թե՛ քանակապես (Նորատուսից և Հին Ջուղայից հետո Մեծ Հայքի ողջ տարածքում առավել խաչքարաշատ փաստացի երրորդ հնավայրն է) և թե՛ արվեստի կատարելության առումով մեծարժեք խաչքարերի իրողությանը՝ Առինջի գերեզմանոցը, կարելի է ասել, ցարդ բավարար չափով չի արժանացել մասնագետների ուշադրությանը[56]:

Ստորև ժամանակագրորեն ներկայացնում ենք վիմագրական ժառանգության առավել ուշագրավ նմուշները:

Խաչքար. պատվանդանին կանգնած, երկու մասի կիսված, վերին ձախ անկյունից և միջնահատվածից փշրված, ստորին մասում՝ փորագիր 4 տող.

Թվ(ին) ՈԼ (1181), այս հանգիստ/ս Գրիգորո քահանաի, աղ/աչեմք, յիշեսջիք ի տ(է)ր: / Սարկաւագ գրիչ:

Հրատ. **Կարախանյան Գ.**, Դիտողություններ XII դարի երկու հուշարձան-կոթողների մասին, «ՊԲՀ», 1975, № 4, էջ 125: Տե՛ս նաև **Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 137:

Ծանոթ. ըստ Գ. Կարախանյանի՝ *գրիչ* ասելով տվյալ դեպքում պետք է հասկանալ *քանդակագործ*:

Խաչքար. վերին հատվածը՝ կոտրված, սակայն պատվանդանի մեջ կանգնած, ստորին մասում և պատվանդանին՝ փորագիր 10 տող.

Յ(իսու)ս Ք(րիստո)ս / ՈԾԷ (1208) [ժ], / ես՝ Աւետիս, / մեծ յուսով / կան(գ-ն)էցի զգերալրա (թերևս՝ գետարգելա) / սուրբ նշանս ի բա/րէխաւսութ(իւ)ն հոգո՝ Նրճըսի ամ/ուսնո իմո եւ զաւակաց իմոց՝ Տիրաւագի և Սարքսի, / զԳրիգոր և զՄխիթար, [յա]դաւթս / յիշէլ զիմ զկազմող սոցա զիս աղաչեմ:

55 Ցավոք, գերեզմանոցի հին հատվածը վերջին երկու տասնամյակների ընթացքում ակնհայտորեն զրկվել է պատշաճ պահպանությունից, որի հետևանքով այնտեղ միանգամայն անթույլատրելի կերպով շարունակաբար ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում մերօրյա թաղումների համար հատկացվող հողակտորները:

56 Հարևանցի կերպով Առինջի գերեզմանոցին վերաբերող նյութերից շահեկանորեն առանձնանում է միայն Հ. Պետրոսյանի ուսումնասիրությունը, որտեղ գոնե մի շարք խաչքարեր են ներկայացված (**Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008):

1181 և 1208 թթ. խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

1219 թ. զույգ խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար, պատվանդանին՝ փորագիր 5 տող.

Կամաւն ա(ստուծո)յ ես՝ Բարսեղս, եւ որդին իմ՝ Ստեփ/աննոս, սրբասէր քահանայք կանկեցայք / զխաչս ի բարեխաւսութե(ա)ն հաւր ի/մո՝ Սարգսի, ոյք երկիրպագանեք, յաղաւ/թս յիշեցէք, թվ(ին) ՈԿԸ (1219):

Խաչքար. պատվանդանին՝ փորագիր 6 տող.

Ի թվիս հա(յոց) ՈԿԸ (1219)-ին, / ես՝ Բարսեղ քահանա, եւ որդի իմ Ստեփա/ննոս պատուական քահանա կանկեցա/ք զխաչս զայս ի բարեխաւսութեն / ամուսնո իմո՝ Մաստնին, ոյք էրկիր/պագանեք, յաղաւթս յիշեցէք աղաչ(եմ):

Խաչքար. ստորին մասում և միջնամասից կոտրված պատվանդանին՝ փորագիր 6 տող.

Թվիս ՈՀԱ (1222)-ին, / կամաւն ա(ստուծո)յ ես՝ [Գրիգ]որ, որդովք... ... /տրոնկաւ եւ մ...աւ կանկեցի զխաչս ... / ...բարեխաւսութ... ...նո իմո Խորասու/ ... ոյք երկ ... յիշեսջիք ի / ... [աղ]աչեմ:

Փարիզում՝ Լուվրի թանգարանում է ցուցադրվում առանց պատճենն իսկ վերցնելու 1976 թ. Առինջի գերեզմանոցից փոխադրված 1266 թ. մի խաչքար:

Խաչքար. քիվին և քիվատակին՝ փորագիր 3 տող.

Կանկնեցաւ խ(ա)չս ի բարեխաւսու/թի(ւն) Խոցադեղին, կ(ա)զմող Ա(ստուա)ծատուր եւ ծնողսն իւր / յիշ(ե)ց(է)ք, ՊՀԳ (1424):

Հրատ. **Սաղումյան Ս.**, Համառոտագրությունը հայ վիմագրության մեջ, «ԼՀԳ», 1978, № 4, էջ 66: **Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 202, 241:

Խաչքարի բեկոր. քիվին՝ 1 տող.

...շինե ծնողացն, ՊՂԲ (1444):

1222 թ. խաչքար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

1424 թ. խաչքար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար. պատվանդանին կանգնած, քիվին, հիմնախաչից վեր և ստորին մասում՝ փորագիր 3 տող.

Խաչս բարեխաւս Սարգիսն ու Թանսուղն, / Ստեփանոս կազմող, / թվ(ին) ՋԺ (1461):

Խաչքար. քիվատակին՝ փորագիր 3 տող.

Թվ(ին) ՋԺԱ (1462):

Խաչքար. քիվատակին՝ փորագիր 3 տող.

Ի թվիս ՋԺԵ (1466), ես՝ Մաս/գոբ, կանկնեցաք զխաչս ի բարէխ/աւսութի(ւն) մեզ եւ ծնողաց մերոց, ա(մէն):

Խաչքար. պատվանդանին կանգնած, երկատված, քիվին՝ փորագիր 2 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս Մխիթարին եւ Մանիրխ..., / թվ(ին) ՋԺԷ (1468):

Ծանոթ. երկրորդ տողը՝ ելնդագիր:

Խաչքար. պատվանդանին կանգնած, վերնամասն ու վերին ձախ անկյանը հարող հատվածը՝ կոտրված, ելնդագիր թվականը՝ հիմնախաչի վերին թևի աջ անկյունում.

... ՋԻԲ (1473):

Խաչքարի բեկոր. քիվին՝ 1 տող.

...գիսին, թվ(ին) ՋԻԹ (1480):

Խաչքարի բեկոր. քիվին և հիմնախաչի վերին թևի երկու կողմերում՝ փորագիր 2 տող.

Ս(ուր)ք խաչ բար(ե)խաւս Յոլքաշին, / թվ(ին) ՋԼԱ (1482):

Խաչքար. պատվանդանին կանգնած, կիսված երկու մասի, աջ եզրից փշրված, երկտող արձանագրության փորագիր առաջին տողը՝ քիվին, ելնդագիր երկրորդը՝ քիվատակին.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս Թումին, Աշիշէին, Ղրիմին, Սիրամա..., / Գրիգոր կազմողս, թվ(ին) ՋԽ (1491):

Տապանաքար. ուղղանկյունաձև, փորագիր երկտող արձանագրության առաջին տողը՝ շրջանաձև.

Այս է հանգիստ Թուրվանդին, / թվ(ին) ՋԿԳ (1514):

1444, 1461, 1462, 1466, 1468, 1473 թթ. խաչքարեր (լուս.՝ Ս. Այվազյանի և Ս. Կարապետյանի, 2014 թ.)

1480, 1482, 1491 թթ. խաչքարեր և 1514 թ. տապանաքար: Սարդարապատի թանգարան փոխադրված 1523 թ. խաչքարը նախնական տեղում (լուս.՝ Ա. Օհանյանի) և դրանից հետո

Խաչքար. քառատված, ստորին կեսը՝ պատվանդանի մեջ, քիվին և հիմնախաչի ստորին թևի երկու կողմերում՝ փորագիր և ելնդագիր 2-ական տող.

Ս(ուր)ք նշանս աւգնական ամ(ենայն) երախտաւորաց ...ոց, | թվ(ի)ս ՊՂԷ (1448), զԳրիգ|որ կազմ(ող) յ(ի)շ(եցէք), Մելիքսէդ յ(ի)շ(եցէք):

Հրատ. **Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 314 (վերծանությունը՝ մասնակի):

Խաչքար. պատվանդանին կանգնած, կիսված երկու մասի, քիվին՝ փորագիր 1 տող.

Ս(ուր)ք խաչ բարէխաւս Ակոբին և ամուսնին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ դ.:

Խաչքար. ստորին մասում՝ փորագիր 1 տող.

զԳրիգ(ո)ր կազմողս եւ զծնողս, յիշեցէք:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը որոշվում է Գրիգոր կազմողի անվան հիշատակումով՝ ԺԵ դ.:

Խաչքար, ԺԵ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար. գեղաքանդակ, քիվատակին՝ ելնդագիր 1 տող.

Արդուքէս յ(ի)շ(եցէ)ք ի Ք(րիստո)ս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ դար:

Խաչքար. գեղաքանդակ, քիվին և ստորին մասում՝ փորագիր 2 տող.

Ս(ուր)ք խաչս բարեխաւս ...ատին և ծնողաց նորին, | թվ(ին) ՋԿԴ (1515):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. լուս.՝ Ա. Օհանյանի, 1970-ական թթ. վերջ:

Սարդարապատի թանգարան փոխադրված խաչքար, 1523 թ.

Խաչս, ս(ուր)ք խաչս բարէխաւս է Ստեփանոսին եւ ծ[նողացն] | թվ(ին) ՋՀԲ (1523), | որորմին Մանիշակին, | Գո|հարին ...:

Ծանոթ. թերևս 1980-ական թթ. այս խաչքարը փոխադրվել է Սարդարապատի թանգարան: Ի դեպ, շնորհիվ Ա. Օհանյանի կատարած լուսանկարի՝ պարզվում է, որ փոխադրումից առաջ խաչքարը կանգուն է եղել, ուստի առնվազն տարօրինակ է և չարդարացված, որ թանգարան փոխադրելիս ընտրությունը կանգ է առել ոչ թե արդեն իսկ տեղահան ու կոտրված հարյուրավոր, այլ հենց տեղում պահպանված կանգուն խաչքարերից մեկին, որը պահպանության տեսանկյունից արդեն իսկ ապահով կացության մեջ էր:

Սարդարապատի թանգարան փոխադրված երկրորդ (1548 թ.) խաչքարին.

Շնորհիւն ա(ստուծո)յ կանկնեցաւ խաչս | փրկութե(ան) հոգոյն պարոն Հեգինին, | թվ(ին) ՋՂԷ (1548):

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. փորագիր 3 տող.

[Սբ] խաչս բարեխաւս Հերապետն | թվ(ին) ՋԸ (1559), դէմիրչե (՞) | մեք Վարդն յիշէ Ք(րիստո)ս, յ(ի)շ(եցէք ի) Ք(րիստո)ս:

Հրատ. առաջին անգամ:

1559 թ. խաչքար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար. քիվին և հիմնախաչի ստորին թևի աջ կողմում՝ փորագիր 3 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս..., | թվ(ին) Ռ/ԾԷ (1608):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. լուս.՝ Ա. Օհանյանի, 1970-ական թթ. վերջ:

Խաչքար. քիվին և հիմնախաչի ստորին թևի աջ կողմում՝ փորագիր 3 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս է պարոն Խաւճին, թվ(ին) ՌԿԳ (1614):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. լուս.՝ Ս. Այվազյանի, 1982 թ.:

Խաչքար. արձանագրությունը՝ փորագիր 2 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս Հէրանին, Գաւզալին, որդոց, | թվ(ին) ՌԿԴ (1615):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. լուս.՝ Ա. Օհանյանի, 1970-ական թթ. վերջ:

Խաչքար. պատվանդանին՝ 2 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս Աւաքս | տ(եա)ռն:

Հրատ. առաջին անգամ:

Խաչքարից թափուր պատվանդանին՝ փորագիր 3 տող.

Ես՝ Փիրղալամս, կանկեցի | զխաչս | Քարամին, Բաբին, թվ(ին) ՌՃ...:

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. պատվանդանին կանգնած, աջ եզրից վերից վար 2/3 մասով փշրված, քիվին և հիմնախաչի տակ՝ փորագիր 2 տող.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս է Ռհանին, թվ(ին) Ռ[Ճ]... (1650-ականներից հետո), | ըՍտեփանոս կազմ(ո)ղ:

Հրատ. առաջին անգամ:

Թռչնապատկերներով խաչքարեր, ԺԲ-ԺԳ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքարերի զանազան բեկորներին.

Խաչքարի բեկոր. քիվին՝ փորագիր 1 տող.
...խաչս է Եղսիպէտին:

Խաչքարի բեկոր. քիվին՝ փորագիր 1 տող.
Ս(ուր)ք խաչս բարէխաւս Գուլումին:

Խաչքարի բեկոր. քիվին և քիվատակին՝ փորագիր 2 տող.
Ս(ուր)ք խաչս բարէխաւս Իմանջին (?), ծն(ո)ղ(աց)ն, / տ(է)ր Աւաք կազմողս յի(շեցէ)ք ի Ք(րիստո)ս:

Խաչքար. քիվին և հիմնախաչի ստորին թևի աջ կողմում՝ փորագիր 3 տող.
Խաչս բարէխաւս է Եղիսայբէ/թին:

Խաչքարի բեկոր. քիվին՝ 1 տող.
...Ամիրջանին:

Խաչքար. քիվին՝ 1 տող.
Ս(ուր)ք խաչս բարեխաւս Վախտանգին կողակցուն:

... / Գա(լ)ուստ կազմողս յ(ի)շ(եցէք):
Հրատ. **Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 241:

Խաչքարի բեկորներ. քիվին և քիվատակին՝ 2 տող.
... / ի Դաւրէժ քաղաքին, ...մեղիս:

Խաչքարի բեկոր. քիվին՝ 1 տող.
[սբ խաչս բ]արեխաւս Սիմէոնին, Անախաթոն(ին):

Առնջուց բերդավանք. գտնվում է գյուղի հյուսիսային եզրի բլրին (N 40°14′03.89″; E 044°34′14.66″)՝ ծովի մակերևույթից 1345 մ բարձրության վրա: Ունի բավականաչափ կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ (արտաքին չափերն են՝ 46,63 x 36,27 մ): Միակ մուտքը բացված է արևելյան ճակատից: Ներսում՝ արևելյան և հյուսիսային պարսպապատերին կից, կան բնակելի և տնտեսական նշանակության մեծ ու փոքր մի քանի սենյակներ: Պարսպափակ մակերեսի գրեթե կենտրոնում հիմնված է թերևս ավելի



Առնջուց բերդավանքը հարավ-արևելքից (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 1980 թ.) և հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1970-ական թթ. վերջ), հատակագիծը՝ ճարտ. Ա. Հակոբյանի, 2014 թ.

հին սրբատեղիի հիմքերի վրա ԺԵ դարում հիմնովին վերակառուցված Առնջուց Սբ. Աստվածածին վանքը, որով և հուշարձանախումբը ներկայանում է որպես պարսպապատ վանք: Սակայն հաշվի առնելով մինչև 2 մ բարձրությամբ պարիսպների հիմնային հատվածների կառուցողական առանձնահատկությունները՝ բերդակը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ ժամանակներից, ըստ որի՝ ոչ թե կառուցվել է իբրև վանքի շրջապարիսպ, այլ որպես ապահով ու ամրացված պատրաստի վայր՝ հիմնել են վանքն արդեն իսկ գոյություն ունեցող բերդակի ներսում. «Առինջի բերդը հին է, պարսպի ներքեւի սեւ քարերի խոշորութիւնից դատելով, հաւանօրէն, Ուրարտական վերջին շրջանների գործ, բայց վերեւի քարերը յետոյ են շարուած»[57]:

Ինչպես վիմագրական, այնպես էլ մատենագրական վկայությունները փաստում են, որ պատմության ընթացքում Առնջուց վանքի համար առավել արգասաբեր է եղել ԺԵ դարը: Համենայն դեպս, հենց այս դարաշրջանին են վերաբերում վանքում ստեղծված ձեռագրերից մի քանիսը, որոնցից 1476 թ. Մաշտոցի հիշատակարանում նշվել է. «Նկարեցաւ... ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի Յառնջեցո, ի վանքս Յառընջուց ի դուռս սուրբ Աստուածածնիս...»[58]:

Հաջորդ իսկ տարում և նույն հեղինակի ջանքերով վանքում գրվել է նաև մի Ավետարան, որի հիշատակարանում էլ նշվել է. «...Ծաղկեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Ըստեփանոս եպիսկոպոսի, ի վանքս Առընջուց, ի դառն և ի նեղ ժամանակիս, զի գնաց Հասան-բէկն և գերեաց զՎրաստան, թվ. ՋԻԶ (1477)»)[59]:

Առնջուց բերդավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու ավերակներն արևմուտքից (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 1980 թ.)

1494 թ. Մկրտիչ և Գրիգոր գրիչների, Ստեփանոս ծաղկողի համատեղ ջանքերով ստեղծված Մաշտոցի հիշատակարանում նշվել է. «Ժ ոսկ(ի) գնաց գրոյս նկարեցաւ ձեռամբ Ստեփանոսի, ի վանս Առընջուց, թիւ՝ ՋԽԳ (1494)»[60]:

Ստեփանոս եպիսկոպոսի գործունեության առնչությամբ Առնջուց վանքը հիշվում է նաև 1499 թ. «...գրեցաւ Աւետարանս հպատակ հոգոյ Ստեփանոս եպիսկոպոսի, ի յաթոռն Ճալէթոյ, ի յաշխարհն Աղուանից... ի թվականիս Հայոց ՋԽԸ (1499): Եւ բերաք ի գաւառս Արարատեան, ի վանս Հառընջոյ Տիրամօր սուրբ Աստուածածնիս: Եւ աստ ծաղկեցաւ ոսկով և բազմերամ գուներով ի բազում միջոցաւ, զի ժամանակ երերան էր և ոչ գոյր խաղաղութիւն: ՋԾԳ (1505) թվին վճարեցաւ նկար սորին»[61]:

Հենց այս ժամանակահատվածում են իրականացվել բերդավանքի շրջապարսպի վերակառուցման և, ըստ ամենայնի, նաև պարսպամիջի վանքի հիմնովին վերակառուցման աշխատանքները: Համենայն դեպս, շինարարական գործընթացը լուսաբանող պահպանված վիմագրերը ստեղծվել են 1488-1501 թթ. միջակայքում:

Շուրջ մեկ դար անց՝ 1606 թ., Առնջուց վանքը հիշվում է Հակոբ վարդապետի գործունեության առնչությամբ. «Ընդ առաջին աշխատաւորացն յիշեսջիք զվերջին ստացող կտակիս զՄեսրոբ Կաֆայեցի, որ ստացա զսա ինձ ի յիշատակ բարի: Զի զսա ընկալեալ էր Յակոբ վարդապետն Առնչեցի ի Պօղոս վարդապետէ. և իմ գնացեալ ՌԾԵ (1606) թվին ի սբ. Էջմիածինն ի Վաղարշապատ, և անտի

57 **Յովսէփեան Գ.**, նշվ. աշխ., էջ 87:

58 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ 397:

59 Նշվ. աշխ., էջ 398, 420:

60 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, 1967, էջ 200: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Դ, Երեւան, 2008, էջ 244: Ի դեպ, 1496 թ. նույն՝ Ստեփանոս Առնջեցին ծաղկել է ևս երկու ձեռագիր, որոնցից մեկը գրվել է Մաքենյաց վանքում և ավարտվել Սաղմոսավանքում, իսկ մյուսը՝ Քանաքեռում («Ծաղկեցաւ ...ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի Յառնջո...») (ԺԵԳ, էջ 226-227):

61 ԺԵԳ, էջ 281:

Առնջուց բերդավանքի Սբ. Աստվածածին եկեղեցին վերականգնումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Երևան, և անտի Առինչք. և անդ շնորհեաց ինձ պակասաւորիս՝ վերոյ ասացեալ՝ Յակոբ վարդապետն և ճգնազգեաց Ձագ վարդապետի աշակերտն՝ Պօղոս վարդապետն...»[62]:

Միևնույն՝ Հակոբ վարդապետի ջանքերով 1626 թ. վանքում ստեղծված ձեռագրի հիշատակարանում էլ նշվել է. «...գրեցի զկենսատու սբ. Աւետարան[ս]..., աւարտեցի և ծաղկեցի...: Եւ դրի յիշատակ իմ հոգոյս Առընջուց վանքս Ս. Մարիամ Աստուածածնիս, Ս. Ստեփանոս նախավկային: Անխափան կարդան... վայելող սորա Յովհաննէս արքեպիսկոպոսն, որ վերակացու է վանիցս և առաջնորդ: Եւ ոչ ոք չունին հրաման և իշխանութիւն հեռացուցանել Ս. Աստուածածնէս կամ գրաւ դնելով կամ ծախելով...: ...գրեցաւ սայ ի թվաբերութեանս հայկազեան տումարիս ՌՀԵ (1626), ի յերկիրս Արարատայ, ի գիւղս, որ կոչի Առինջք, ի վանս Ս. Մարիամ Աստուածածնին և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ՝ սբ. Ստեփանոս, սբ. Սիոն, սբ. Ծիրան և որ սբ. Յակոբ և այլ ամենայն սրբոցն: ...յիշեցէք զտիեզերալոյս վարդապետն մեր՝ զՄովսէս, որ այս սբ. Աւետարանիս թուղթն նա շնորհեաց: ...Աւետիս սարկաւաքն յիշեցէք, որ ձեռնասու է բանիս և արուեստաւոր և մեզ ծառայութիւն անող»[63]:

Գրիչ Մարինոսի ջանքերով վանքում «Վարք Հարանց» ձեռագիրը ստեղծվել է 1650 թ. «...գրեցաւ սա ի դառն և ի տրտում ժամանակի, ի գեղ Առընջու, ի դուռն Ս. Աստուածածնի, ի գումարս կուսան կանանց, ի թվականի ՌՂ և Թ (1650)»[64]:

Թեև գրավոր աղբյուրները վկայություն չեն թողել, սակայն, ամենայն հավանականությամբ, մոտակա Ձագավանքի և բազմաթիվ այլ կառույցների նման վանքն էլ փլուզվել է 1679 թ. երկրաշարժից և ընդհուպ մինչև 2000 թ. այլևս չի վերականգնվել:

Առնջուց վանքի կենտրոնական կառույցը հիշատակարաններում բազմիցս վկայված Սբ. Աստվածածին եկեղեցին է: Սա հորինվածքով թաղածածկ պարզ բազիլիկ է (արտաքին չափերն են՝ 8,07 x 6,26 մ), սակայն աչքի է ընկնում կիսաբոլորակ խորանը նաև արտաքուստ նույն կերպ շեշտված սակավադեպ լուծումով: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Նույն կողմից մեկական մուտք ունեն նաև եկեղեցուն հարավից և հյուսիսից կցված ավանդատները:

Վերականգնված եկեղեցու որմերում առկա են մի քանի խաչքարեր, իսկ արևելյան ճակատին՝ արծվի տեսքով Հովհաննես ավետարանչի խորհրդանիշ արծվաքանդակը Առնջուց վանքի ավերակներում (լուս.՝ Ա. Օհանյանի, 1970-ական թթ. վերջ.)

Հովհաննես ավետարանչի խորհրդանիշ արծվաքանդակն Առնջուց վանքի ավերակներում (լուս.՝ Ա. Օհանյանի, 1970-ական թթ. վերջ.)

քով Հովհաննես ավետարանչի՝ երկատված և մասամբ քայքայված բարձրաքանդակը: Ինչպես պարզում է ելնդագիր քառատող շքեղ արձանագրությունը, վերջինիս հեղինակն է ԺԵ դարում վանքում ստեղծված մի քանի ձեռագրերի ծաղկող-նկարիչ Ստեփանոս եպիսկոպոսը.

Ստեփանոս եպ(ի)ս(կոպոս) նկարող յիշեցէք ի ... ...Յոհանէս աւե/[տարա]նիչ՝ արծիւ:

62 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1974, էջ 237:

63 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1978, էջ 225-226:

64 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1984, էջ 387:

Առնջուց վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատին ագուցված խաչքարերը, ԺԶ-ԺԷ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Հովհաննես ավետարանչի խորհրդանիշ արծվաքանդակը վերականգնման ժամանակ՝ ագուցված Առնջուց վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատից բացված լուսամուտից վեր (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Եկեղեցու վերջին հիմնավոր վերաշինությունը պետք է որ տեղի ունեցած լինի ԺԷ դարի 50-60-ական թթ., քանի որ այն իրականացրել է առինջեցի հայտնի ճարտարապետ Նավասարդը[65] և եկեղեցու խորանի վեմքարի ոտքի (կոթունի) արևմտահայաց երեսին էլ փակագիր եղանակով թողել իր անունը:

Վերոնշյալից հետևում է, որ վանքի վերջին վերաշինությունն իրականացվել է ԺԷ դարի 50-60-ական թթ., որի ժամանակ էլ արևմտյան ճակատին ագուցվել են ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների ԺԶ դարով թվագրվող և վերջին վերաշինության ժամանակ էլ իրենց նախկին տեղում պահված և ցարդ ամբողջական զույգ խաչքարերը:

Վերջիններիցս զատ՝ վերականգնման ժամանակ եկեղեցու որմերում ագուցվել են նաև ժամանակի ընթացքում կոտրատված առանձին խաչքարերի արձանագիր բեկորներ.

Խաչքարի բեկոր. պահպանվել է ստորին կեսը, վերականգնման ժամանակ ագուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատին, ստորին մասում՝ փորագիր 1 տող.

Ա(ստուա)ծ ողորմի տ(է)ր Գրի(գորին), թվ(ին) ՋՀ (1521):

Հրատ. առաջին անգամ:

Խաչքարի բեկոր. պահպանվել է միայն վերին կեսը, քիվամասը պատի մակերևույթին հավասար պահելու նկատառումով արդեն դարեր առաջ (թերևս ԺԶ դարում) փշրել են: Վերականգնման ժամանակ ագուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային ճակատին, միջնամասում՝ ելնդագիր 1 տող.

Գրիգոր կազմողս:

Հրատ. առաջին անգամ:

65 Առինջեցի Նավասարդ ճարտարապետի շինարարական արգասավոր գործունեության պտուղներն են Բոլնիս-Խաչենի գերեզմանատան Սբ. Կիրակի եկեղեցին (1655 թ.), Հաղպատի Սբ. Նշան եկեղեցու (նաև սրահի և զանգակատան) նորոգությունը (1656 թ.), Տփղիսի Սբ. Նշան եկեղեցու հիմնովին վերակառուցումը (1662 թ.), Շղվերի Բնիձորի եռահարկ եկեղեցին (1663 թ.):

Առնջուց վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան և հարավային ճակատներին ագուցված խաչքարերի բեկորները, ԺԶ դ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Վիմագրերով (այդ թվում՝ փակագրեր) հատկապես հարուստ են վանքի շրջապարիսպը և առանձնապես վերջինիս արևելյան որմն ամբողջ երկարությամբ թե՛ արտաքուստ և թե՛ ներքուստ: Ահա դրանք.

Շրջապարսպի արևելյան ճակատի հյուսիսարևելյան անկյունաքարին՝ 1 տող.

Հիմն(արկեցաւ) ՋԼԷ (1488) թվին:

Հրատ. **Սաղումյան Ս.**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, «ԼՀԳ», 1980, № 3, էջ 78:

Նույն քարի հյուսիսահայաց երեսին՝ 1 տող.

Թվ(ին) ՋԽԱ (1492):

Այլ քարին՝ փակագիր 5 տող.

Թվ(ին) Ջ|ԽԸ (1499), | Ական | վիճ(ա)կ|(ա)ց...:

Ծանոթ. արձանագրությունն թերևս կիսատ է մնացել, կամ շարունակությունը եղել է մեկ այլ քարի վրա, որը տեղում չէ: Փակագիրը Ս. Սաղումյանը թեականորեն վերծանել է *Անանիա կաթողիկոս* (**Սաղումյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 79):

Մեկ այլ քարի հյուսիսահայաց երեսին՝ 1 տող.

Զվա(ր)պ(ե)տ | Խաչատուր | յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Հրատ. **Սաղումյան Ս.**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, «ԼՀԳ», 1980, № 3, էջ 78:

Դարպասի անկյունաքարին՝ ներքուստ 3 տող.

Տ(է)ր Սանվէլ քարգործ, որ/ղի տ(է)ր Յոհանէսին յի/շեցէք ի Ք(րիստո)ս, ի թվ(ին) ՋԾ (1501):

Հրատ. **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 87: **Սաղումյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 78:

Ծանոթ. Գ. Հովսեփյանը *Սանվել* անձնանունը սխալմամբ ընթերցել է *Մանուէլ:*

Մեկ այլ քարին՝ ներքուստ 3 տող.

Խաչատու/ր միայնակեաց | յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Հրատ. **Սաղումյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 78:

Մեկ այլ քարին՝ ներքուստ 3 տող.

Մսըր աղ/էն յիշեց/էք ի Ք(րիստո)ս:

Հրատ. **Սաղումյան Ս.**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, «ԼՀԳ», 1980, № 3, էջ 78:

Մեկ այլ քարին՝ ներքուստ, 3 տող.

զՔրիստոս(ա)տուր | աղա նորագաւի/թո յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Ծանոթ.. Նորագավիթ գյուղը ներկայումս Երևանի շրջագծի մեջ է:

Դարպասից ոչ հեռու ընկած առյուծի բեկորված բարձրաքանդակին՝ 2 տող.

Տ(է)ր Ստ(ե)փ(անոս) վ(արպետ կամ վարդապետ) | կուքեց(ի)...:

Ծանոթ. Կուքին գյուղ է Նախիջևանի Շահապոնք գավառում:

Ըստ ամենայնի, բացակայում է արձանագրության սկզբնամասը, որի պատճառով էլ բովանդակությունը չի ամբողջանում:

Փակագիր.
Արիստակես կաթողիկոս:
Հրատ. **Սաղումյան Ս.**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, «ԼՀԳ», 1980, № 3, էջ 79:

Փակագիր.
Յոհանէս կաթողիկոս:
Հրատ. **Սաղումյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 78:

Փակագիր.
Կարապետ վարդապետ:
Հրատ. **Սաղումյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 79-80:

Առնջուց վանքում ուշագրավ պատկերաքանդակի շնորհիվ առանձնահատուկ նշանակություն ունի շրջապարսպի միակ մուտքի բարավորը, որի ներքին ճակատին առկա են մուտքը հսկող միմյանց փաթաթված, բաց երախներով, օձամարմին զույգ վիշապներ:

Այն հանգամանքը, որ նույնիմաստ քանդակները բազմաթիվ այլ հուշարձաններում հանդիպում են բացառապես մուտքերի արտաքին ճակատներում, կարծել է տալիս, որ շրջապարսպի այս հատվածը հավանաբար

Առնջուց վանքի շրջապարսպի դարպասը և մուտքի՝ պահապան վիշապների քանդակներով բարավորը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Անիի աշտարակների պահապան վիշապները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

վերակառուցվել է ԺԵ դարի վերջին[66], որի ժամանակ էլ բարավորը տեղադրվել է հակառակ դիրքով: Սրա հետևանքով էլ մուտքի պահապանները, որոնք ի սկզբանե երևացել են արտաքուստ, արդեն շատ վաղուց ու նաև ներկայումս երևում են ներքուստ: Ինչ վերաբերում է բարավորի կերտման

66 Ի դեպ, դարպասի վերակառուցված լինելու մասին է վկայում նաև բարավորի կամարի բացվածքի ավելի լայն, իսկ մուտքն ավելի նեղ լինելու իրողությունը:

ժամանակաշրջանին, ապա թերևս այն կարելի է թվագրել ԺԲ-ԺԳ դարերով (պատկերագրական առումով համանման պահապան վիշապներ ունեն քաղաքամայր Անիի աշտարակներից երկուսը):

Չագավան գյուղատեղի[67]**.** երբեմնի Առինջից մոտ երեք կիլոմետր, իսկ ներկայումս վերջինիս արևելյան արվարձաններին գրեթե կից գտնվում են մատենագիր աղբյուրներում արդեն Է դարից, իսկ ավելի ստույգ՝ Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսի գահակալության տարիներին (661-667 թթ.) հիշվող Չագ ավանի մնացորդները. «...տէր Զաքարիայ. սա էր ի Կոտայս գաւառէ՝ ի գեղջէն Չագայ. ի միում աւուր ամենայնին արժանաւորեալ՝ սարկաւագութեան եւ քահանայութեան եւ կաթողի-

67 Չագ ավանի և Չագավանքի պատմությունն առավել մանրամասն տե՛ս **Մարգիս Մխիթարյանի** «Միջնադարյան Գետարգելի (Չագավանքի) պատմությունը» (Երևան, 2014) գրքում:

կոսութեան, այր սուրբ եւ առաքինի ամս քսան եւ երկու»[68]:

Թ դարում Ձագ ավանը հիշվում է Սմբատ սպարապետի կամքով որևէ հոգևոր աստիճան չունեցող ոմն Զաքարիային մեկ օրում կաթողիկոսացնելու առնչությամբ. «...սպարապետն Սմբատ հրամայէ ժողովել եպիսկոպոսաց և ձեռնադրել կաթողիկոս զԶաքարիա ի գաւառէ Կոտայից ի գեղջէ Ձագայ, որ եկաց մաս ԻԲ: Սա յառաջ քան զհայրապետութիւն ոչ ինչ աստիճան ընկալեալ երիցութեան կամ սարկաւագութեան, այլ անարատ կեանս կեցեալ՝ ի միում աւուր բոլոր աստիճանացն եհաս պատուոյ» (գահակալել է 855-875 թթ.)[69]:

1270 թ. Ձագ ավանը նշանավոր է դառնում տեղում հրավիրված եկեղեցական ժողովի կապակցությամբ[70]:

ԺԵ դարից սկսում է հիշվել ոչ թե գյուղը, այլ հատկապես նույնանուն վանքը տեղում ստեղծված ձեռագրերի առնչությամբ: Դրանցից է, օրինակ, 1425 թ. գրիչ Ստեփանոս կրոնավորի հեղինակած ժողովածուն, որի հիշատակարանում նշվել է. «...գրեցա սա յաստուածաբնակ Սուրբ ուխտս որ կոչի Ձագավանք ընդ հովանեաւ Սուրբ Գետարգելիս եւ Սուրբ Սարգսիս Կուրանց կոչեցեալ եւ սուրբ աջոյս Կիրակոսի եւ այլ սրբոյս որ աստ կան հաւագեալ: Գրեցաւ գիրքս ի թվականիս Հայոց ՊՀԴ (1425), ի խնդրոյ հօր վանիցս՝ Դաւթի եւ նորին աշակերտի՝ Սարգիս կրօնաւորին եւ փակայկալի, որ զստացան զսա յիշատակ իւրեանց եւ ծնօղաց իւրոց: ...գրեցաւ յառաջնորդութեան ազգիս Հայոց տեառն Պաւղոսի, եւ յարհիեպիսկոպոսութեան մեծ նահանգիս Արարատեան տէր Յոհանիսի նորընծայ...: Եւ ի բռնակալութեան Սքանդարին, որդոյ Ուսուփին Թորգոմեան, երկրորդ աշրաֆ ազգիս Հայոց եւ աւերող եկեղեցեաց, եւ ի պարնութեան երկրիս Փիրդարիպի եւ Աւդուլի՝ թոռանց Սահաթի»[71]:

Մոտ 1425-1426 թթ. Սիմեոն ղաբունապետի գլխավորությամբ իրականացվում են վանքի պարսպապատման աշխատանքներ, նաև կանգնեցվում հինգ մեծաչափ խաչքարեր. «...եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն Ձագավանք, և վերստին կարգեաց զամենայն բարի կարգս և օրէնս յերկրին Կոտեաց՝ ի կարգաւորս, յազատս և յաշխարհականս: Վասնզի շատ անկարգութիւն և անօրէնութիւն մտեալ էր յեկեղեցի: ...զամենայն սահմանս և զկարգ վանիցն ուղղեաց ըստ առաջնոյն... զվանքն պարսպեաց և ամրացոյց...: Եւ հինգ մեծամեծ խաչ կանգնեաց ի մէջ պարսպին. կամէր զեկեղեցի շինել և այլ բազում արդիւնս առնել, եհաս հրաման յարարչէն կոչել զվարդապետն առ ինքն, ի թուիս ՊՀԷ (1428)...»[72]:

1441 թ. Կիրակոս պատրիարքին Ամենայն Հայոց կաթողիկոս օծելիս ներկաների թվում է եղել «...Սարգիս վարդապետ Ձագավանից...»[73]:

1481 թ. ստեղծված Ավետարանի հիշատակարանում նշվել է. «...ես՝ Դաւլատ, ստացայ զԱւետարանս հալալ յարդեանց իմոց և տվի Ձագովանից, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, ի դուռն հրաշափառ կաթուղիկէի Գէորգայ, և գետադարձ սուրբ Նշանիս, և լուսատու սուրբ Սարգսիս, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ: Ի թվականիս հայոց ՋԼ (1481)...: ...ես՝ Դաւլատս..., դարձեալ յետոյ տվի Աւետարանս զայս Ձագա եկեղեցուն, ի դուռն սրբոյ Դաւթի քաջ նահատակին...»[74]:

Ըստ 1656 թ. Աշխարհացույցի հիշատակարանի՝ «...Կոտայք Երևան է իւր վիճակովն և Ձագավանք անդ է, ուր կա Գետարգել ս. նշանն, և Կիւրեանց ս. Սարգիսն, և սուրբ Կիրակոսի աջն...»[75]:

ԺԷ դարում հիշվում է երկրաշարժի (1679 թ.) պատճառած վնասների կապակցությամբ[76]:

1691 թ. նշվել է. «Ձագավանք Գետարգել սուրբ Նշանն. եւ սուրբ Սարգսի եւ սուրբ Կիրակոսի աջերքն»[77]:

Թերևս հիմնադրման ժամանակներից ի վեր վանքը տիրապետել է բազմաթիվ, այդ թվում ամբողջ գյուղերի: Նույնիսկ ԺԸ դարում՝ 1765 թ., դեռևս վանքապատկան էին Կոտեից գավառի մի քանի գյուղեր. «Աւան, Ձագավանք, Ձագ, Շըհապն, Արամուս, Աղասօր, Արախուս»[78]:

Երևանի խանության տարածքը նվաճելուց հետո ռուսները Ձագ գյուղին կից հիմնում են զորանոց և կառուցում զանազան շինություններ: Ուշագրավ է, որ շինարարական աշխատանքների ժամանակ՝ 1832 թ., հայտ-

68 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, 1982, Երևան, էջ 77-78: Ձագ ավանի տեղադրության վերաբերյալ Մ. Թաղիադյանցը նշել է. «Ձագ անկանի ի լեռնադաշտին, որ ի պատճառս անբաւութեան բողից, բոլեաց, ողորմկոթից, և այլ բազում ուտելի և բարեհամ բանջարաց՝ անուանէին Բողի լերինք: Ունի վտակ հոսեալ յայսոցիկ լերանց, որ ոռոգեալ զանդաստան սորա, երթայ խառնի ի Հրազդան» (**Թաղիադեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847, էջ 139):

69 **Մտեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 109: Տե՛ս նաև «Տէր Զաքարիա ի Կոտայիցն ի գեղջէ Ձագայ՝ ամս ԻԲ» (**Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, 1893, Վաղարշապատ, էջ 92): Նաև՝ «Յետ Յովանէսի նստաւ հայրապետ տէր Զաքարիա, ի Կոտայից, ի գեղջէ Ձագայ, ամս ԻԲ (22), որ ի միում աւուր ի սարկաւագութենէ եհաս ի վեհագոյն աստիճան» (Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը 17-րդ դար, Մանր ժամանակագրություններ 13-18 դդ., հ. 2, Երևան, 1956, էջ 335):

70 **Գարեգին վարդապետ**, Ձագավանից ժողովը, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 22-46: Տե՛ս նաև Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2000, էջ 647-648:

71 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Դ, Երեւան, 2008, էջ 340:

72 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 561-562:

73 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, Երևան, 1999, էջ 219:

74 ԺԵԳ, Երևան, 1967, էջ 14:

75 **Թօփճեան Յ.**, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 77:

76 **Զաքարեայ սարկաւագի** պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հ. 2, էջ 104:

77 **Uluhogian G.**, Un' antica mappa dell' Armenia. Ravenna, 2000, p. 82.

78 Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, Թիֆլիս, 1894, էջ 804:

նաբերվում է հունարեն արձանագրություններով ոսկյա և արծաթե դրամներով լի երկու սափոր և անմիջապես փոխադրվում Պետերբուրգ. «...հասաք յաւերական Ձագայ՝ հնոյ Կոտէից. յորոյ ի թիկանց է Բարձապի. յորում էին խարխուլք ինչ քարաշէն եկեղեցւոյ: Ձայս տեղի զկնի յաղթութեան արարին Ռուսք ամարանոց զօրաց իւրեանց, որոց ի բրել ինքեանց զգետնափորս ի բնակութիւն՝ յամի Տեառն 1832, գտին զերկուս սափորս լիս հնգոյն ոսկի և արծաթի դրամովք՝ յունական գրովք, առ կուսակալութեամբ Երևանայ՝ Կնիազ Վասիլի Բէհբուդեանց Հայկազնոյ, և յաջորդութեամբն Գրիգոր Եպիսկոպոսի Արդուինցւոյ՝ Ծուկուլն կոչեցելոյ. որք համարեցան լինիլ դրամքք Արշակունի թագաւորաց մերոց. և բարձեալ ամբողջ առաքեցան ի գանձարան ի կայսերական ի քաղաքն Պետրոսի»[79]:

1839 թ. Ձագ կամ Ձագավան գյուղն արդեն գոյություն չուներ, քանի որ նրա տարածքն ամբողջապես հատկացվել էր զինվորականությանը. «...չի՛ք այժմ աստ բնակիչ հարկատու գերդաստանաց. յորում ըստ հրամանի իշխանութեան կառուցին յարքունեաց զմեծամեծ բնակարանս դասաւորեալ կարգաւ վասն զօրաց՝ որք և գտանին այժմ աստէն և ըստ յատկացեալ ժամանակին փոփոխին այլուր և անդրէն դառնան. և է տեղին ի վայելուչ դիրս յարևմտեան ստորոտի բլրակի միոյ. ուր գտանի և հին եկեղեցի գեղջս ի կոփածոյ քարանց. այլ մեծ մասամբ յաւերութեան: Գոյ մատուռն գերեզմանոցաց ի տաշածոյ քարանց յարևելից գեղջն՝ կիսաւէր, յոլով գերեզմանուտք են յեզերս այսր գեղջ և խաչվէմք ի շիրիմսն անդ»[80]:

Ձագավանք (Գետարգել). Ձագ գյուղի արևմտյան եզրին է գտնվում

Ձագավանքի հուշահամալիրը հյուսիս-արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Կոտեից գավառի քրիստոնեական պաշտամունքային առավել հայտնի կենտրոններից մեկը՝ Ձագավանքը: Բաղկացած է դեռևս Է դարում հիմնված և 8,43 x 8,11 մ արտաքին չափերով խաչաձև գմբեթավոր հորինվածքով Սբ. Նշան անվամբ հայտնի եկեղեցուց (N 40°14′03.57″; E 044°35′38.30″, ծովի մակերևույթից 1345 մ բարձրության վրա), ավելի ուշ նրան կցված զույգ մատուռ-ավանդատներից, հազիվ 60 մ հյուսիս-արևելքում գտնվող 4,98 x 5,01 մ արտաքին չափերով զանգակատնից (N 40°14′05.49″; E 044°35′39.42″, ծովի մակերևույթից 1357 մ բարձր), ինչպես նաև միաբանական նշանակության մեկ շարքով միմյանց կից շուրջ մեկուկես տասնյակ խցերից (ձգվում են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ուղղությամբ՝ 62,4 մ), դարպասով շրջապարսպից, գերեզմանոցից և

79 **Թաղիադեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138-139:
80 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 163-164:



Ձագավանքի գլխավոր հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Ձագավանքի Սբ. Նշան եկեղեցին վերականգնման նախօրեին (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2012 թ.) և 2014 թ.

անհայտ նշանակության այլ շինությունների մնացորդներից:

Հայտնի է, որ վանքը շեն է եղել մինչև 1679 թ. երկրաշարժը, որից հետո փլուզված շինություններն այլևս չեն վերականգնվել: Ժամանակի ընթացքում քայքայվելու արդյունքում 1839 թ. վանքն այցելուին ներկայացել է այսպես. «Ձագավանք. ևս՝ վանք Գետարգելի սուրբ Նշանի. է յարևմտից հարաւոյ ձագայ՝ ի հարաւային ըստորոտի այլ բլրակի. յորում են Բ. շէնք տաճարաց. մին փոքր իբրև մատուռն արտաքոյ աւերակաց տանցն. որոյ և փոքրիկ գմբէթն՝ թերևս յերկրաշարժութեանց, անկեալ դնի անդէն ամբողջ. և սա է որ անուանի մատուռն Գետարգել սուրբ Նշանի. քանզի պահէր այն սուրբ նշան երբեմն աստ. և այժմ իսկ թէպէտ և յաւերութեան՝ գնան յուխտ մերձակայ բնակիչք յաւուրս յինանց յանուն այնր սուրբ նշանի»[81]:

Թերևս եկեղեցու կառուցման ժամանակաշրջանին է վերաբերում ճա-

81 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 163:

Հատվածներ Ջագավանքի Սբ. Նշան եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Ջագավանքի Սբ. Նշան եկեղեցու ճակատները երիզող միատող արձանագրության մասերից մեկը

կատներից բացված լուսամուտների միջնամասով (որմնախարսխից հաշված՝ շարվածքի 7-րդ շարք քարերի վերնամասով) ձգվող միատող արձանագրությունը, որի ամբողջական բովանդակությունը, հակառակ գործադրված ջանքերի, ցավոք, մեզ չհաջողվեց վերականգնել:

Ահա երեսապատի առանձին քարերին պահպանված արձանագրության հատվածները.

...արկ վ...
...զաւակք ին...
...զիս նկ...
...ղ Յուդա մատնչին...

Ջագավանքի Սբ. Նշան եկեղեցու մնացորդները և Պռոշյան իշխանական տան բարձրաքանդակ զինանշանը՝ ճանկերում գառը պահած արծիվը (լուս.՝ 1920-ական թթ.)

Ջագավանքի Սբ. Նշան եկեղեցու ճակատները երիզող միատող արձանագրության մնացորդները (լուս.՝ 2014 թ.)

...որ ոք ի...
...(ք)առասն(ից)...
...ացն Ք(րիտոս)ի եւ ընդ...
Հրատ. առաջին անգամ:

Ժամանակագրորեն Սբ. Նշան եկեղեցու հաջորդ փուլի վիմագրական ժառանգությունը վերաբերում է ԺԲ-ԺԳ դարերին: Վերջիններս մեզ են հասել սոսկ երեսապատի առանձին քարերի տեսքով, որոնք, ըստ գրչության և բովանդակության, մաս են կազմել միմյանցից տարբեր վիմագրական միավորների: Այստեղ ափսոսանքով ստիպված ենք նշել, որ պակասող (կորած) քարերի պատճառով նրանց մեծագույն մասի բովանդակությունը մնում է կիսատ:

Ահա դրանցից մի քանիսը.

Արձանագիր բեկոր, 5 տող.

Թի(վն) ՈԿԱ (1212), յա(նուն)...|, ես՝ Գավազանս, ո(ղղի)... | ...աշխատութ(եամ)ք գնեց(ի)... |...ն ի ձորաղրանն եր... |... և գրեցին ինձ զտա(ւնին կամ տարի)...:
Հրատ. առաջին անգամ:



Արձանագիր բեկոր, 4 տող.

...ա(ստուծո)յ Գրիգոր... | ...(մի)այ-բանեց... | ...այ վանաց եւ ... | աւ, որք ...:

Հրատ. առաջին անգամ:



Արձանագիր բեկոր, 6 տող.

...(կատ)արիչքն աւրին(ին) Խոց(ա-դեղ)...: | Ես՝ ծառայ ա(ստուծո)յ, ար... | ...եանց եւ ամուսին ի(մ) ... | ...(մի)այ-բանեցա ս(ուր)ք ա... | ...աւետարան... | ... եղբարքս վան...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 5 տող.

... Ա (1) Յ... | ...որա դրանն... | ...ք ետու ի ս(ուր)ք զաւ(րավարաց) ... | ...ցն Ի (20) աւր ժամ ... | ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 6 տող (6-րդ տողը մեկ այլ արձանագրության առաջին տողն է).

Թվ(ին) ՌԷ (1558), կամաւ ... | քս խոստացան ... |ին Բ (2) ժամ տաւնին ո... | կիրակէն, ով խափան|է դատի տ(եառն)է: Հ...: |

Կամաւ բարերա(րին աստուծոյ)...

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 7 տող.

...| թէնին ծ... | ...ցպաննեց[ի] փեր... | ...ն Ե (5) ժամ՝ Դեղին ... | ...սն եւ Գ (3) ժամ հ... | ...նա եւ Գ (3) ժամ ... | ...ուտս տաճ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 5 տող.

... աչմ... | ...թանդր... | ...ուշեղադ... | ...ն Կլկնձոր... | ...աճ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 4 տող.

... ա(ստուծո)յ Գրիգոր... | ...(մի)այ-բանեց(ա)... | ...այ վանաց եւ... | ...(սպաս)աւորքս խոստ(ացան)...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 4 տող.

...ան... | ...միայբանքս տ(ուին)... | ... ս Ա (1) աւր պատ(ար)|[ա]գ ի տաւնի գիւտ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր բեկոր, 4 տող.

...այ պա... | ...կին միայբ(անեցա)... | ... Ճ (100) դահեկան ... | ...նայս...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. Սբ. Նշան եկեղեցու մեկ շարքի միմյանց կից երեք քարերին՝ 7 տող (վերականգնումից հետո արձանագրությունը տեղ է գտել հարավային խաչաթևում՝ որմնախարսխից հետո 6-րդ քարաշարում).

Կամաւն ա(ստուծո)յ, ես՝ Սամուէլս՝ որդի Վահրամ Շիկան, | գնեցի Ձիքահանաց բակին տեղն ի մլքատրոջէն եւ | շինեցի եւ տվի վախումն ձիքահանքն զիմ տուն | զին բողչէն եւ զՄարտիրոսի բաղչէն, որ գնեցի եւ տվի | Գետադարձ ս(ուր)ք Նշանիս յիշատակ՝ ինձ ու ծնողաց իմոց, | կատարօղքն (աւրհինի)..., որ խաբանէ ԳՃԺԸ (319) հայրապետ|աց անիծա(ծ է) ... ուցի եւ զ...:

Հրատ. **Գասպարյան Ռ.**, Ձագավանքի համալիրը և նրա արձանագրությունները, «ՊԲՀ», 2007, № 1, էջ 206:

Ծանոթ. հրատարակիչը 2-րդ տողում *մլքատրոջէն* հասարակ անունը սխալմամբ վերծանել է իբրև անձնանուն՝ *Մլքատ* ձևով, 7-րդ տողում *անիծած*-ի փոխարեն ունի՝ *նզոված: Առկա են նաև այլ բացթողումներ:* Վիմագրի ստեղծման հավանական ժամանակը՝ ԺԴ դար:

Արձանագրություն. Սբ. Նշան եկեղեցու արևմտյան ճակատին, ստորին հատվածում, առաջին և երկրորդ քարաշարերի վրա՝ 9 տող, ընկած քարերի պատճառով տողերը թերի են, և ամբողջական իմաստ չի ստացվում.

Ես ծառ(այ) ... | մնայքն... | ...զաւրայ վ... | ...յ վանայ... | եկան եւ սպասաւ(որք)... | տարին Ա (1) աւր պատա(ռագ) ... (կատար)|իչքն աւրհնին, որ խա(փանէ դա)տի ի տ(եառն)է, ամէն: ...| ի տաւնի Քառասն(ից)...:

Արձանագրություն. սրբատաշ երեսապատի երկու քարի վրա (առաջին քարը կորած է).

...զմասն Յուդային առցէ
...ծախելով կամ գրավելով
...ով որ յանդգնի այս բանիս
...(Գե)տառգել ս(ուր)ք Նշանին:

Հրատ. առաջին անգամ:



Արձանագրություն. սրբատաշ երեսապատի երկու քարին՝ 5 տող.

Կամաւն ա(ստուծո)յ, ես՝ Խոցայդեղս: / Կամաւն ա(ստուծո)յ ես՝ Մաթոս, որդի տ(է)ր Զաքար/էն, իմ Շխիճանի յիգին տվի Գետառգել/ին վախմ, / թվ(ին) ՌԱ (1552):

Հրատ. առաջին անգամ:

Զանգակատուն, հարավային ճակատին՝ 4 տող.

Թվ(ին) ...(կամաւն) ա(ստուծո)յ, ես՝ Գրիգոր կ(ա)թ(ուղիկոս) ամ(ենայն) հ(այո)ց, ամ(ենայն) վ(ար)դ(ապետոք եւ) / եպիսկոպոսք շնորհեցաք զՁագ ընծայ / Գետառարձ ս(ուր)ք Նշանիս մի՛ որ իշ/խեսցէ հակառակիլ հրամանաց մեր:

Հրատ. **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 164: **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 214:

Ջագավանքի զանգակատունն արևմուտքից, հյուսիս-արևմուտքից և հարավ-արևելքից (լուս.՝ 1920-ական թթ. և 2014 թ.)

Զանգակատուն, արևմտյան ճակատին՝ 15 տող.

Թվին ՉՀԴ (1325), / ի պարոնութեան Զաքարիա / քոռն Աւագին, մեք՝ Դաւիթ / եւ Վահապ եւ Փաքա, եւ որդիք մե/ր՝ Բահադին, եւ որդիք մեր՝ Սատր/իկ եւ Բահադին եւ Աւդուլա, վասն յու/սոյն, որ առ աստուած եւ մեր արեւուս համար / քողաք զվանաց կոռս՝ զմարդո, եզ/ին, իշո եւ զամենայն ցեղ կոռ եւ զհասարա/կ ի տուրքս միացուցաք, թէ ոք ի մեր/ոց կամ աւտարաց կամ աւագաց խափանել ջան/ա, մեր ազգի մեղացն պարտական է եւ յեր/ից սուրբ ժողովոյն նզոված զԿաենին / եւ զՈւդային ժառանգ է, եւ ամեն ազգա/ց նալաթ լինի, կատարիչքն աւրհնին աստուծոյ:

Հրատ. **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 164: **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 210:

Զաքավանքում է հանգչում հայտնի ուսուցչապետ Սիմեոն Ռաբունին: Նրա հիշատակը հավերժացնող գերեզմանական հուշարձանախումբը բաղկացած է վերնամասում երկթեք ավարտով մեկ տապանաքարից և վերջինիս արևելյան եզրին զետեղված պատվանդանին կանգնեցված գեղաքանդակ խաչքարից (ներկայումս նախնական տեղում է միայն տապանաքարը, իսկ խաչքարից պահպանվել է ստորին կեսը, այն էլ հանիրավի հեռացված բուն գերեզմանից):

Խաչքար. ստորին մասում՝ փորագիր 2 տող.

Ս(ուր)ք նշանս տ(է)ռունական, տիպ եւ պատկեր անեղական Սի/մէոն ռաբունապետին լեր քավարան, թվ(ին) ՊՀԷ (1428):

Հրատ. **Սաղումյան Ս.**, Սիմեոն ռաբունապետ Տաթևացի, «ԼՀԳ», 1975, № 6, էջ 85: Տե՛ս նաև **Գասպարյան Ռ.**, Սիմեոն ռաբունապետ Տաթևացին և նրա գործունեությունը Զաքավանքում, «ԼՀԳ», 2005, № 3, էջ 181: **Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 256-257: **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 201:

Զանգակատուն, հյուսիսային ճակատին՝ 3 տող.

Կամաւն ա(ստուծո)յ ես՝ Մոծակենց Մկրտիչս, Զաքավանաց հանդն / գնեցի եւ ետու վախմ Գետարգել Ս(ուր)ք Նշանիս. ով ոք ետ եւ առաջ / տանէ ԳՃԺԸ (319) հայրապետացն նզոված լինի, թվին ՌՄԷ (1758):

Հրատ. **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 164: **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 214-215:

Ծանոթ. երեք տողերի սկզբնամասերը թերի են, քանի որ առջևի քարն ընկած-կորած է: Վերականգնումից հետո տեղը լրացվել է ողորկ սրբատաշ քարով:

Տապանաքար. փորագիր 1 տող.

Այս է հանգիստ եւ վեմ իմաստուն քաջ Սիմէոն ռաբունապետին, թվ(ին) ՊՀԷ (1428):

Հրատ. **Գասպարյան Ռ.**, Սիմեոն ռաբունապետ Տաթևացին և նրա գործունեությունը Զաքավանքում, «ԼՀԳ», 2005, № 3, էջ 182: Նույնի՝ Զաքավանքի համալիրը և նրա արձանագրությունները, «ՊԲՀ», 2007, № 1, էջ 201:

Սիմեոն Բաբունու հիշատակին կերտված խաչքարը, 1428 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար, 1444 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար, 1462 թ. (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2012 թ.)

Խաչքար, 1555 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

Խաչքար, 1556 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Խաչքար, ԺԵ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

Զանազան այլ բեկորներին առկա են.

Ս(ուր)ք խաչս բարէխաւս է Խ...ճաի:
Հրատ. առաջին անգամ:

...ոխնի որդի աղա Պողոսի:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. արձանագրությունը ելնդագիր է:

Խաչ բարէխաւս Դավլթին, թ...:
Հրատ. **Գասպարյան Ռ.**, Ջագավանքի համալիրը և նրա արձանագրությունները, «ՊԲՀ», 2007, № 1, էջ 206:

Թվ(ին) ՋԴ (1455):
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. թվականը զետեղված է ստորին մասում:

Թվ(ին) ՋԵ (1456):
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. արձանագրությունը՝ վարդյակի երկու կողմերում, ելնդագիր:

Ս(ուր)ք խաչս բ(ար)էխաւս է Ասլի-զատ(ի)ն:
Հրատ. **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 206:
Ծանոթ. արձանագրությունը՝ քիվագոտու վրա, ելնդագիր:

Ս(ուր)ք խաչս բարեխաւս Ոհանէս աբեղային, թվ(ին) ՋԻ (1471):
Հրատ. **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 210:
Ծանոթ. արձանագրությունը՝ տապանաքարի ստորին մասում:

...չս բարեխաւս... \ոս քահանային ել[ւ կա]զմողին:
Հրատ. առաջին անգամ:

...ած ի տ(է)ր Թաթոս կ(ա)թ(ո)ղ(ի-կո)ան:
Հրատ. առաջին անգամ:

Թվ(ին) ՋԺԱ (1462):
Հրատ. առաջին անգամ:

Ս(ուր) խաչս բարէխաւս է Սուլթան-ղ(ու)լ(ի)ն, / Յոհէս կ(ա)զմող:
Հրատ. **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 210:
Ծանոթ. արձանագրության երկրորդ տողը՝ ելնդագիր:

Այս է հանգիստն տապան մահդասի Ղազարին, \ թվ(ին) [Ռ]\ՃԼԸ (1689):
Հրատ. **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 206:
Ծանոթ. օրորոցաձև տապանաքար է: Հրատարակիչը չունի տարեթիվը, իսկ «հանգիստն տապան»-ի փոխարեն սխալմամբ՝ *հանգստատապան*:

Թվ(ին) ՊՂԳ (1444):
Հրատ. առաջին անգամ:

Սուտ եւ անարժան պոռի...ղայ, որ Յուհանէս կ(ա)զ(մող):
Հրատ. **Գասպարյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 210:

(Սուրբ խա)չս բարէխաւս Գավար...:
Հրատ. առաջին անգամ:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
Ֆանտան
Լուսակերտ
Նուռնուս
Ջրաբեր
Յատիս
Կապուտան
Նոր Գեղի
Բյուրեղավան
Չովաշեն
Նոր Հաճն
Ապջնի
Կոտայք
ԱԲՈՎՅԱՆ
Ակունք
Սեւաբերդ
Սեւաբերդ
Պտղնի
Նորգյուղ
Գետամեջ
Բալահովիտ
Ձորա
Քանաքեռավան
Կաթնաղբյուր
Մայակովսկի
Արամուս
Առնջուց
Ծաղկավանք
Կամարիս
Առինջ
Գեղաշեն
Ձորաղբյուր
Ձովք
ԵՐԵՎԱՆ
Ջրվեժ
Ողջաբերդ
Գեղադիր
Գեղարդ
Գեղարդավանք
Գողթ
Հացավան
Գառնի

Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճանաչել հարազատ օրրանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամրելի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույնն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սոսկ հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազան է, որտեղ պատմական հուշարձաններն էլ հավաքական առումով Երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ էլ մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Ախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շրջաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որի մաս են կազմում մի քանի հազար չափագրություններ, գրաֆիկական և քարտեզագրական նյութեր:

Ստեղծվել է նաև բնակավայրերի պատմությանն առնչվող տվյալների հատուկ շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

ՀԵՈՒ հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների հրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես հրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը զետեղված են համացանցում:

Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

http://www.armenianarchitecture.am http://www.raa.am RAA Armenia raayer@sci.am ☎ (37410) 52 15 25

Տպագրված է «Բյուրակն» հրատարակչատանը
ԵՐԵՎԱՆ
ՀԵՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2015